

բերը բոլորովին նոյն չեն, անոր համար առանձին նկատելու ենք զիրենք:

Ա. Գուսանք, որ ըստ բառիս ծագման կը թուին նշանակել նուագահար<sup>1</sup>, անհրաժեշտ էին բոլոր զինարբույթեանց մէջ, եւ ամենուրեք կը հանդիպինք անոնց: Գրաստամատ չի մոռնար իւր տիրոջ բանտէն ներս անգամ տանիլ զանոնք, եւ «ուրախ առնէր զնա գուսանօք» կամ «արուեստականօք» (Փաւս. 207): Տերենտի ընթրեաց նկարագրին մէջ ասոնք կ'որոշուին իրենց զարկած զանազան զործեաց անուններով, այսպէս. «Առ հասարակ քրմքրկահարք եւ սրեգահարք, քեարահարք եւ փողահարք իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձայնիւք բարբառեցան» (նոյն, 232). տողեր՝ որոց մէջ հայ պատմիչն անտարակոյս ի նկատի ունի աւելի ազգային մերձաւոր սովորոյթը քան հեռաւոր բիւզանդականը: Եւ արդարեւ դարեր վերջ կը տեսնենք դեռ հայ ճոխեր, որ «քմրկօք

1. Համեմատել Կուսան (Հիւրշ. 131) կամ Քիուսան (Գ. Գպ.) կոչուած հնադարեան պարսիկ երգչին կամ սրնգահարին անուան հետ, որ կը նշանակէ նաեւ տեսակ մ'երգեցողութիւն (Գ. Գպ.): Իսկ արար. գոշս՝ է փող, սրինգ, միջին դարուն հայացած գոս ձեւով. «Փող եւ գուսերքս զոչէին» (Շնր. Եղեւ. 47. — տպ. եւ Վենետիոյ 1441ի եւ Բ հին օր. կը գրեն քուէրս. 1620ին քաշդերս. 1702ին քաշերս. 2 օր. նոր՝ գուէրս. Է եւ Է օր. նոր՝ գուէրս):